<<ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/7>> ծածկագրով Շրջանակային

համաձայնագիր կնքած բոլոր Մասնակիցներին

«ՎՕԳԿ-ՇՀԱՊՁԲ-11/7-2» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում ՀՀ ԱՆ <<Վնասվածքաբանության և օրթոպեդիայի>> ՓԲԸ–ի կարիքների համար անհրաժեշտություն է առաջացել ձեռք բերելու <<ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/7>> ծածկագրով շրջանակային համաձայնագրով նախատեսված ապրանքները՝ «**Շինանյութ**» :

Հայտնում եմ Ձեզ, որ գնման առարկայի վերաբերյալ Ձեր կազմակերպության հայտն անհրաժեշտ է ներկայացնել ՀՀ ԱՆ <<Վնասվածքաբանության և օրթոպեդիայի գիտական կենտրոն>> ՓԲԸ ք.Երևան Նորք-Մարաշ 9փ. 123շ. հասցեով, գնումների համակարգող՝ Արեգ Ներսիսյանին, մինչև 2014 թ. նոյեմբերի 21-ի ժամը $14^{00}$ -ն:

Հայտերը կբացվեն ՀՀ ԱՆ <<Վնասվածքաբանության և օրթոպեդիայի գիտական կենտրոն>> ՓԲԸ-ի շենքում ք. Երևան Նորք-Մարաշ 9փ. 123շ. հասցեով 2014թ. նոյեմբերի- 21ին, ժամը $14^{00}$-ին:

Հայտը ներառում է գնման ընթացակարգին մասնակցելու դիմումը և գնային առաջարկը: Հայտն անհրաժեշտ է ներկայացնել ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/7 ընթացակարգի հրավերով սահմանված կարգով:

Կից ներկայացնում ենք կնքվելիք պայմանագրի նախագիծը:

Մասնակցի կողմից հայտի ներկայացումը պարտադիր չէ:

Եթե, Հրամանով հաստատված ցանկում ներառված կոնկրետ գնման գործընթացի մասով, Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական ակտով նախատեսված է, որ մասնակիցը Օրենքի 5-րդ հոդվածով նախատեսված պահանջներին իր տվյալների համապատասխանության ապահովման և/կամ գնահատման համար պետք է պատվիրատուին ներկայացնի այլ (լրացուցիչ) փաստաթղթեր և/կամ տվյալներ, ապա նշված փաստաթղթերը և/կամ տվյալները պատվիրատուին ներկայացնում է ընտրված մասնակիցը՝ մինչև Կարգի 110-րդ կետի 7-րդ ենթակետով սահմանված կարգով պայմանագրի կնքումը: Ընդ որում՝

-նման փաստաթղթերի և/կամ տվյալների ներկայացման և գնահատման կարգը սահմանվում է շրջանակային համաձայնագրով՝ հիմք ընդունելով Օրենքի 31-րդ հոդվածի 5-րդ մասի և կարգի 75-րդ կետի պահանջները,

-նման պահանջի դեպքում, մասնակիցներից պահանջվող փաստաթղթերի ցանկը և վավերապայմանները, ինչպես նաև մասնակցության իրավունքի և որակավորման գնահատման կարգը պետք է նախատեսված լինի շրջանակային համաձայնագրեր կնքած մասնակիցներին պատվիրատուի կողմից ուղարկվող հրավերով (ծանուցումով)՝ հղում կատարելով Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական ակտի համապատասխան (կոնկրետ) դրույթին ի կատարումն որի պահանջվում են լրացուցիչ փաստաթղթերը և/կամ տվյալները:

Հարգանքներով

գնումների համակարգող Արեգ Ներսիսյան

հեռ. /010/65-05-40

էլ. հասցե scto.gnumner@hotmail.com